Եվրոպայի Խորհրդի նախարարների կոմիտեի համաժողով «Թվային դարաշրջանում խոսքի ազատություն և ժողովրդավարություն – հնարավորություններ, իրավունքներ, պարտականություններ» թեմայով
(Բելգրադ (Սերբիա), 7-8 նոյեմբեր 2013)
Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարար Հրայր Թովմասյանի ողջույնի խոսքը

Նախարարներ, տիկնայք և պարոնայք,
Ինձ համար մեծ պատիվ է ներկայացնել Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեն նման կարևոր միջոցառման շրջանակներում: Նախ շնորհակալություն եմ հայտնում Սերբիայի Հանրապետության նախագահին իր երկրում հյուրընկալելու և ջերմ ընդունելության համար: Շնորհավորում եմ նաև Սերբիայի նախագահին և փոխնախագահին ընտրությունների կապակցությամբ:
Հայաստանի Հանրապետության համար պատիվ է առաջին անգամ ստանձնել Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի նախագահությունը, ինչը Հայաստանը դիտում է որպես հավելյալ հնարավորություն իր նպաստը բերելու Եվրոպայում ժողովրդավարական գործընթացների զարգացման ու ամրապնդման համընդհանուր նպատակին:

Հայաստանի նախագահության շրջանի համար սահմանվել էին մի շարք գերակայություններ ու նպատակներ, որոնց հիմքում դրված էին այն մարտահրավերները, որոնց հետ այսօր բախվում են Եվրոպայի խորհրդի անդամ բոլոր պետությունները՝ մարդու իրավունքների պաշտպանության, ժողովրդավարության և օրենքի գերակայության ամրապնդման ոլորտներում::
Խոսքի և մամուլի ազատությունները, ժողովրդավարության կարևորագույն հիմնասյուներից են: Ժամանակակից աշխարհում թերևս անգնահատելի է մամուլի դերը հանրային կյանքում՝ քաղաքական հաշվետվողականությունից և թափանցիկությունից մինչև սոցիալ-մշակութային նպատակների ապահովման տեսանկյունից:
Մեր այս միջոցառման թեման՝ «*Խոսքի ազատությունը և ժողովրդավարությունը թվային դարաշրջանում. Հնարավորություններ, իրավունքներ և պատասխանատվություն*» բնորոշում է մեր առջև դրված բոլոր խնդիրները: Անվիճելի է, որ խոսքի ազատությունը մի կողմից՝ ժողովրդավարության դրսևորում և մյուս կողմից՝ ժողովրդավարության երաշխիք է: Սակայն խոսքի ազատությունը ստեղծում է ոչ միայն հնարավորություններ, այլ նաև առաջ է բերում այլոց իրավունքների հետ բախումը հավասարակշռելու և իրավունքների բարեխիղճ օգտագործումը չարաշահումից սահմանագծելու խնդիր:
Միևնույն ժամանակ խոսքի ազատությունը ծնում է նոր ռիսկեր: Ժամանակակից աշխարհում պետությունները բախվում են մի շարք բարդ, իսկ երբեմն էլ հակասական մարտահրավերի հետ:,

2010թ. Հունվարին Նախարարների կոմիտեն ընդունեց հռչակագիր Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածի կիրառմանը նպաստելուն ուղղված միջոցառումների վերաբերյալ, որտեղ ևս մեկ անգամ շեշտվում է , որ խոսքի և տեղեկատվության ազատությունը, ներառյալ ԶԼՄ-ների ազատությունը, իրական դեմոկրատիայի և ժողովրդավարական գործընթացների պարտադիր նախապայման է: Կոմիտեն նաև նշեց, որ այս ազատությունների չպահպանման դեպքում տուժում է օրենքի գերակայությունը:
Նախարարների կոմիտեն որոշել է հատկապես ուշադրությունը սևեռել գործնական կիրառության վրա՝ իր տարեկան թեմատիկ բանավեճ-քննարկումներից մեկը նվիրելով Եվրոպայում մամուլի ազատության համապատասխան ասպեկտներին: Նմանատիպ առաջին քննարկումը՝ կազմակերպված 2012թ., վերաբերում էր «Լրագրողների անվտանգությանը»: Այս տարվա ընթացքում ամբողջ աշխարհում 43 լրագրողների սպանությունները հիշեցնում են մեզ այն դժվարին պայմանների մասին, որում աշխատում են լրագրողները և լրատվամիջոցների այլ աշխատակիցներ: Ուրախ եմ, որ այս կարևորագույն խնդիրը ձեր օրակարգում է:

Այս կոնտեքստում ես կցանկանայի ձեր ուշադրությունը հրավիրել այս տարվա հուլիսին նախարարների կոմիտեի կայացրած մի որոշման վրա, որն առնչվում էր մամուլի ազատության լուրջ ոտնահարումների վերաբերյալ այդ ոլորտում գործող շահագրգիռ կազմակերպությունների կողմից Եվրոպայի խորհրդի համապատասխան մարմիններին քարտուղարության միջոցով զեկուցելու նպատակով բաց հրավեր կազմակերպելու օգտակարությանը: Այդ ժամանակ համաձայնություն ձեռք բերվեց անդրադառնալու ինտերնետային հարթակ ստեղծելու ձևաչափերին, որն ուղղված պետք է լիներ վերոնշյալ մարմինների և ԵԱՀԿ մամուլի ազատության հարցերով ներկայացուցչի կողմից հավաքագրված տեղեկատվության ամբողջացումը, մշակումը և տարածումը հեշտացնելու գործընթացին:
Նախարարների կոմիտեն նախատեսել է մի նոր թեմատիկ քննարկում անցկացնել դեկտեմբերի 11-12-ի հանդիպման ընթացքում «Լրագրողների անվտանգությունը. Հետագա քայլեր մարդու իրավունքների նորմերի առավել արդյունավետ կիրառման ոլորտում» թեմայով: Այդ առումով նպաստավոր կլինի այն փաստաթուղթը, որը կընդունի համաժողովը, փաստաթուղթը հետագա քննարկումների, ինչպես նաև թեմայի շրջանակներում Եվրոպայի խորհրդի հետագա գործունեության ընթացքում կարող է ուղեցույց դառնալ
Նախարարներ, տիկնայք և պարոնայք,
Այս համաժողովի ընթացքում քննարկման ենթակա թեմաներից մեկն է «Ինտերնետի և հիմնարար իրավունքների հասանելիությունը»:
Եվրոպայի խորհուրդը ի սկզբանե մեծ ուշադրություն է դարձրել այս խնդիրների շուրջ պատշաճ գործողությունների իրականացմանը՝

ժողովրդավարության սկզբունքներին և մարդու իրավունքներին համապատասխան: 2010թ.-ից նախարարների կոմիտեն ընդունել է ոչ պակաս քան 9 հռչակագիր և 5 հանձնարարական, որոնք հիմնականում բացահայտում են նոր ոլորտներ և ընդունում ծագող իրավիճակներում խոսքի ազատության չափանիշներ: Մտաբերում եմ, օրինակ, նախարարների կոմիտեի ինտերնետ կառավարման սկզբունքների մասին հռչակագիրը, որը լայն ճանաչում է ձեռք բերել:

2013թ հունիսի 13-ին նախարարների կոմիտեի՝ թվային եւ այլ վերահսկողության տեխնոլոգիաներից բխող հիմնարար իրավունքների համար առաջացող ռիսկերի վերաբերյալ հռչակագիրը նույնպես անդրադառնում է մի շարք արդիական հարցերի:
Վերջապես, վերհիշենք, որ 2012թ. մարտին նախարարների կոմիտեն ընդունեց ինտերնետ կառավարման վերաբերյալ Եվրոպայի խորհրդի 2012-2015թ. ռազմավարությունը: Ռազմավարությունը հստակ գործողությունների ծրագրով բացահայտում է պետական և ոչ պետական գործիչներին ինտերնետ տիրույթը ներառական և ժողովրդակենտրոն դարձնելու հնարավորություն տալու համար մարտահրավերները Հաջորդ տարվա սկզբին Նախարարների կոմիտեն միջանկյալ կվերանայի ռազմավարությունը, որն առիթ կդառնա այս ոլորտում իրականացված և իրականացվող աշխատանքների վերլուծության և գնահատման համար:

Այդուհանդերձ, ժամանակակից աշխարհում ինտերնետի տարածումը և համացանցի օգտագործումը ազատ խոսքի արտահայտման համար նոր մարտահրավերներ են պետությունների համար: Զրպարտության և վիրավորանքի ռիսկերը այսօր ահագնացող և մտահոգիչ են աշխարհի շատ երկրներում: Ավելին, ինտերնետը օգտագործվում է որպես բավական հարմար միջոց ռասիզմի և այլատյացության քարոզչության համար: Պատահական չէ, որ Եվրոպայում ռասիզմի և այլատյացության դեմ պայքարը, եվրոպական արժեքները մշակութային երկխոսության միջոցով տարածելը Հայաստանի նախագահության շրջանի համար Հայաստանի սահմանած գերակայություններից է:

Այդ նպատակով Հայաստանը 2013թ. հոկտեմբերի 21-22-ին կազմակերպել էր Եվրոպայում խտրականության և անհանդուրժողականության դեմ պայքարին նվիրված ներկայացուցչական համաժողով: Համաժողովը անդրադարձել է ռասիզմի ու այլատյացության թեմաներին, ինչպես նաև սոցիալական ցանցերում և մամուլում հանդիպող ատելություն սերմանող կոչերին և ռասայական կարծրատիպերի դեմ պայքարին առնչվող հարցերին: Հեշտ չէ ապահովել տեղեկատվության մատչելիության իրավունքի անարգել կիրառումը, միևնույն ժամանակ՝ զսպել անհանդուրժողականություն և ատելություն սերմանելու նպատակով տեղեկատվական տեխնոլոգիաների և սոցիալական ցանցերի օգտագործումը:

Այս առումով, Հայաստանի նախագահությունը այդ սպառնալիքների դեմ ժամանակին ուղղված արձագանք է համարում Եվրոպայի խորհրդի և

գլխավոր քարտուղարի մի շարք նախաձեռնությունները, որոնք վերաբերում են համացանցում /online/ ատելություն սերմանող ելույթների դեմ պայքարին:

Եվրոպայի խորհուրդը պետք է շարունակի հանդես գալ որպես հիմնական դերակատար ինտերնետ կառավարման քննարկումներում, ապահովելով մարդու իրավունքների, ժողովրդավարության և օրենքի գերակայության հիմնարար դերակատարությունը:

Նախարարներ, տիկնայք և պարոնայք.
Եզրափակելով խոսքս, ողջունում եմ համաժողովի ձևաչափի ընտրությունը, հատկապես նկատի ունենալով զուգահեռաբար անցկացվող աշխատանքային նիստերը, որոնք շահագրգիռ կողմերի երկխոսությունը նախարարական նիստերում ներառելու հնարավորություն են տալիս: Սա նորարարական մոտեցում է, որը, հուսով եմ, կնպաստի ձեր քննարկումներն առավել արդյունավետ դարձնելուն: նախարարների կոմիտեն ակնկալում է ձեր առաջարկները հետագա գործողությունների իրականացման վերաբերյալ, որոնք կարող են իրականացվել Եվրոպայի Խորհրդի «Թվային դարաշրջանում խոսքի ազատության և ժողովրդավարության» թեմայով քննարկման շրջանակներում:

Եվրոպայի խորհրդի անդամ և նախագահող երկրի անունից ես իմ խորին շնորհակալությունն եմ հայտնում Եվրոպայի խորհրդին խոսքի և տեղեկատվության ազատության ոլորտում իր հետևողական պայքարի և նման արդիական թեմաներ բարձրացնելու և դրանց շուրջ մտորելու համար ԵԽ անդամ երկրների այսքան բարձրաստիճան պատվիրակներին այս լսարանում հավաքելու համար:
Շնորհակալություն ուշադրության համար:

Թարգմանությունը՝ռուսերենից